

**Դրամաշնորհային աջակցություն «Մարդկային անվտանգության ծրագրերի» համար ՖՏ 2023.
«Ծաղկաձորում անտառային հրդեհների դիմակայունության բարձրացման ծրագրի»**

2024 թվականի մարտի 13-ին Մեդրաձոր համայնքում տեղի ունեցավ «Ծաղկաձորում անտառային հրդեհների դիմակայունության բարձրացման ծրագրի» դրամաշնորհային պայմանագրի ստորագրման արարողությունը (մինչև 72,915):

Դրամաշնորհի պայմանագիրը ստորագրվել է Հայաստանում Ճապոնիայի դեսպան պարոն Աոկի Յուտակայի և «Տնտեսական լրագրողների ակումբի» ՀԿ-ի նախագահ տիկին Աննա Բաղդասարյանի միջև: Արարողությանը ներկա էին նաև Ներքին գործերի նախարարի տեղակալ և փրկարար ծառայության պետ պարոն Կամո Յուցուլյանը, Կոտայքի մարզպետ պարոն Ահարոն Սահակյանը, Ծաղկաձորի խոշորացված համայնքի ղեկավար պարոն Նարեկ Հարությունյանը, ինչպես նաև տեղական ինքնակառավարման մարմինների ներկայացուցիչներ և ծրագրի շահագրգիռ կողմեր:

Այս ծրագիրը նպատակ ունի կամավոր հրշեջների համար բազա կառուցելու միջոցով հնարավորություն տալ համայնքին պատրաստ լինելու արտակարգ իրավիճակներին պատշաճ արձագանքմանը: Ծրագրի արդյունքում հրշեջների արձագանքման ժամանակը կկրճատվի առավելագույնը մեկ ժամից մինչև մոտավորապես 15 րոպե՝ պաշտպանելով համայնքի ընդհանուր առմամբ 9000 մարդու՝ այդ թվում՝ Լեռնային Դարարադից տեղահանվածների կյանքերն ու ապրուստը:



Բացման արարողության մեկնարկը՝ հայկական ավանդական պարային կատարմամբ



Պարոն Աոկին և պիկին Բաղդասարյանը ստորագրում են դրամաշնորհի պայմանագիրը



(Չախից) դեսպան Աոկի, մարզպետ Սահակյան, նախարարի տեղակալ Յուցուլյան, համայնքապետ Հարությունյան, տնօրեն Բաղդասարյան



Ծրագրի վայրը